ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՅԹՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐ (ԸՍՏ ՍԻՒՆԻՔԻՑ ԳՐԱՌԱԾ ՆԻՒԹԵՐԻ)[1]

ՅԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
hasmikabrahamyanihasce@gmail.com

ՄՈՒՏՔ

Նախնադարեան ժամանակներից սերող բնապաշտական երեւոյթները կրօնամշակոյթային տարբեր շրջափուլերում շարունակել են մնալ որպէս հոգեւոր մշակոյթի կարեւոր բաղադրիչ: Բնապաշտական սովորոյթների առանձին խումբ են բոյսերին առնչուող հաւատալիքները եւ ծէսերը: Բուսաշխարհի - այդ թւում ծառերի - տարատեսակ կիրառումը մարդու կենցաղում յատուկ վերաբերմունք է ձեւաւորել դրանց նկատմամբ[2]: Սուրբ ծառեր են համարուել փռշնին, սօսին, բարտին, ուռենին, թխկին, թեղին, բոխենին, հաճարենին, ընկուզենին, սալորենին, տանձենին, մասրենին եւ այլ ծառատեսակներ[3]: Վերջիններիս վերաբերեալ հաւատալիքները տարածուած են Հայաստանի տարբեր շրջաններում, ինչը վկայում են ազգագրական եւ բանագիտական գրաւոր ու բանաւոր սկզբնաղբիւրները: Սիւնիքում ամենատարածուածներից են ընկուզենուն առնչուող հաւատալիքները:

Ընկուզենին Հայաստանում գրեթէ համատարած աճեցւում է, սակայն շատ են նաեւ վայրաճ ընկուզենիները, որոնք հանդիպում են հիմնականում բնակատեղիների յարակից տարածքներում, անտառներում[4]:

---

[1] Յօդուածը պատրաստուել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտութեան կոմիտէի 20TTSH-053 «Բնական բուսական ռեսուրսների օգտագործումը Սիւնիքում. աւանդոյթները, ժամանակակից միտումները եւ հեռանկարները» գիտական նախագծի շրջանակում: Վերոնշեալ վերնագրով զեկուցում է ներկայացուել «Սիւնիքը՝ կրթութեան եւ մշակոյթի օջախ» խորագրով գիտաժողովին (Գորիս, 27-28 Հոկտեմբեր 2022):

[2] Ծառերի պաշտամունքի մասին տե՛ս՝ Լ. Սիմոնեան, *Ծառ-ծաղկաքաղիկ,* ՎՄՎ Պրինտ, Երեւան, 2017, էջ 241-71. նաեւ՝ Ա. Սարգսեան, «Ծառերի պաշտամունքի դրսեւորումները հայոց հաւատալիքային համակարգում», *Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն, գիտական աշխատութիւններ,* III:2000, էջ 73-79:

[3] Տե՛ս, օրինակ՝ Սարգսեան, էջ 74:

[4] Ե. Լալայեան, «Զանգեզուր, ընտանեկան բարք. ամուսնութիւն եւ հարսանեաց սովորութիւններ», *Ազգագրական հանդէս, գիրք Դ,* Թիֆլիս, տպարաններ Մ. Դ. Ռօտինեանց եւ Կ. Մարտիրոսեանց, 1898, էջ 132. նաեւ՝ Ա. Մարգարեան, «Ընկուզենի», *Հայկական սովետական հանրագիտարան, հտր. 4,* Յակոբ Մեղա-

Ընկուզենու պտուղը, բնափայտը լայնօրէն օգտագործուում են. պտուղն օգտագործուում է ուտեստի մէջ (գիտական նախագծի շրջանակում գրառած նիւթերը փաստում են, որ Սիւնիքում ընկոյզն օգտագործուում է գերազանցապէս վայրի ուտելի բոյսերից պատրաստուող ճաշատեսակների մէջ, հազուադէպ՝ իւղի փոխարէն), բուժական նպատակով[5], որպէս ապրանքափոխանակման մթերք[6], մանկական խաղերի ուսուցողական պարագայ[7], կեղեւը եւ միջի պատեանը՝ որպէս ներկանիւթ կամ շպարի հումք, փայտը՝ շինանիւթ եւ վառելափայտ[8], ծառաբնի կեղեւանիւթը՝ որպէս կրակ ստանալու հումք[9] եւն.: Իսկ ընկոյզի հասնելու ժամանակը ծառայել է որպէս տոմարական ցուցիչ (Ալափարսի Ս. Վարդան եկեղեցու ուխտի օրինակով)[10]: Գրանցուած օգտագործման տարբերակները եւ ծիսապաշտամունքային գործառոյթները նոյնն են մշակուող եւ վայրի ընկուզենիների համար:

պարտի անուան պոլիգրաֆկոմբինատ, Երեւան, 1978, էջ 108. նաեւ՝ Ս. Խանզադեան, *Հայրենապատում, գիրք Ա, 1929-1970,* «Հայաստան» հրատ., Երեւան, 1980, էջ 91. նաեւ՝ *գիրք Բ, 1945-1979,* «Հայաստան» հրատ., Երեւան, 1981, էջ 432, 513. նաեւ՝ Ս. Հախվերդեան, *Գորիսի ամփոփ պատմութիւն,* «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2005, էջ 12. նաեւ՝ Կ. Ալեքսանեան, *Հայաստանի քաղաքները. Ագարակ,* հեղինակային հրատ., Երեւան, 2009, էջ 4. նաեւ՝ Լ. Յակոբջանեան, *Ներքին Հանդ. 190,* «Լուսաբաց» հրատ., Երեւան, 2010, էջ 29. նաեւ՝ Գ. Մանուկեան, Ս. Սաֆարեան, *Սիւնիքի մարզի Կապանի եւ նրա տարածաշրջանի համայնքների պատմութիւնից,* «Դաւիթ թագաւոր» հրատ., Երեւան, 2013, էջ 139, 410. նաեւ՝ Ս. Մելիքստեփանեան, *Կապան (ուրուագծեր երկրամասի պատմութեան),* «Անտարէս» հրատ., Երեւան, 2015, էջ 206:

[5] Տե՛ս, օրինակ՝ Ե. Լալայեան, «Արցախ. Վարանդա», *Երկեր, հտր. 2,* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 162, 163: Գիտական նախագծի շրջանակում գրառուած դաշտային նիւթը վկայում է, որ մեր օրերում թաց ընկոյզը, որպէս բուժամիջոց, օգտագործուում է վահանաձեւ գեղձի խնդիրների դէպքում:

[6] Գ. Խաչատրեան, Գ. Մուրադեան, *Շաղապ,* «Հայաստան» հրատ., Երեւան, 2003, էջ 114:

[7] Տե՛ս, օրինակ՝ Վ. Բդոյեան, *Հայ ժողովրդական խաղեր, պրակ II,* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 131, 136, 143. նաեւ՝ Մ. Գրիգորեան-Սպանդարեան, *Լեռնային Ղարաբաղի բանահիւսութիւնը,* ՀՍՍԱ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 464. նաեւ՝ Ա. Ղազիեան, Ս. Վարդանեան, *Բաքուի հայոց բանահիւսութիւնը,* «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2004, էջ 304:

[8] Ռ. Հայրապետեան, «Մեռնող ծորերը», *Սիւնեաց երկիր,* 29 Հոկտեմբեր 2016, էջ 2:

[9] Հ. Մարգարեան, «Խիզանի գաւառի ազգագրական նիւթեր», Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի ազգագրութեան եւ բանահիւսութեան արխիւ (ՀԱԻ ԱԲԱ), ֆոնդ 96, թերթ 209, հմմտ.՝ Ա. Յարութիւնեան, «Տարօնի ազգագրութիւնը», ա.թ., ՀԱԻ, ԱԲԱ, ֆոնդ 69, թերթ 24:

[10] Սիմոնեան, *Ծառ,* էջ 263:

ԱՌԱՋԱԴՐՈՒԱԾ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սերունդների միջեւ գիտելիքի փոխանցումը ոչ միշտ է համակարգուած եւ նպատակային կատարւում, ինչի հետեւանքով գիտելիքն ու յիշողութիւնը յաճախ մոռացւում կամ ձեւափոխւում են: Ուստի՝ սոյն յօդուածի հիմնական նպատակներն են.-

ա) հաւաքագրուած դաշտային նիւթերը գիտական ու հանրային գործածութեան դաշտ բերելով՝ ժողովրդի հոգեւոր մշակութային արժէքների մոռացումը կանխել,

բ) դաշտային նիւթի եւ գրականութեամբ առկայ նիւթերի եւ ուսումնասիրութիւնների համադիր վերլուծութեամբ վեր հանել եւ համակարգել ընկուզենու ծիսապաշտամունքային գործառոյթները եւ դրան առնչուող հաւատալիքների ընդհանրական պատկերը:

Ըստ այդմ՝ հետազօտութեան խնդիրն է մերօրեայ հաւատալիքները համեմատել աւանդական կենցաղում տարածուած հաւատալիքների հետ եւ արձանագրել, թէ վերջիններից ո՛րն է պահպանուած մեր օրերում՝ ա) որպէս կենսունակ հաւատալիք, բ) որպէս յիշողութիւն, գ) որպէս մոռացուած հաւատալիք, դ) ինչ նոր հաւատալիքներ են ձեւաւորւում մեր օրերում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուածի համար որպէս սկզբնաղբիւր են ծառայել «Բնական բուսական ռեսուրսների օգտագործումը Սիւնիքում. աւանդոյթները, ժամանակակից միտումները եւ հեռանկարները» գիտական նախագծի շրջանակում մեր[11] աշխատանքային խմբի՝ 2021-23ին Սիւնիքի մարզի հինգ խոշորացուած համայնքների (խ/հ) 19 բնակավայրերում գրառուած դաշտային ազգագրական նիւթերը[12]. Գորիս խ/հ (ք. Գորիս, գ. Ակներ (Բռուն), Խնձորեսկ, Քարահունջ), Տեղ խ/հ (գ. Տեղ, Քարաշէն, Խնածախ), Սիսիան խ/հ (գ. Անգեղակոթ, Շաքի, Ախլաթեան, Ոյծ, Շէնաթաղ), Կապան խ/հ (գ. Անտառաշատ, Առաջաձոր, Շիկահող, Ծաւ, Դաւիթ Բէկ), Մեղրի խ/հ (գ. Շուանիձոր, Լիճք): Սկզբնաղբիւր են հանդիսացել նաեւ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ նախկին գիտաշխատող Սաթենիկ Մկրտչեանի «Գորիսի տարածաշրջանի ազ-

---

[11] Նիւթերը - 2021-23ին - գրառել են արշաւախմբի անդամներ Ռոման Յովսէփեանը (ծրագրի ղեկավար), Յասմիկ Աբրահամեանը, Անի Սարատիկեանը, Նինա Ստեփանեան-Ղանդիլեանը: Արխիւային եւ գրաւոր աղբիւրներից նիւթեր է տրամադրել ծրագրի անդամ Ռաֆիկ Գաբրիէլեանը: Խորին շնորհակալութիւն՝ Ռ. Յովսէփեանին, սոյն թեման առաջարկելու եւ կարեւոր դիտարկումների համար, ինչպէս նաեւ ծրագրի միւս մասնակիցներին՝ համագործակցութեան համար:

[12] Խումբն աշխատել է Սիւնիքի մարզի բոլոր խոշորացուած համայնքներում՝ քաղաքային եւ գիւղական աւելի քան երեսուն բնակավայրերում, սակայն թեմային առնչուող նիւթեր առայժմ գրանցուել են վերը նշուած բնակավայրերում:

գագրական ուսումնասիրութեան արդիւնքները ամփոփող հաշուետուութիւն»ը[13], որից տուեալներ ենք վերցրել Վերիշէն գիւղի վերաբերեալ:

Ազգագրական նիւթի գրառման համար կիրառուել է հարցազրոյցի մեթոդը (անհատական խորացուած եւ խմբային): Հաւաքագրուած նիւթը վերլուծուել է եւ մշակուել՝ համադրուելով գրաւոր սկզբնաղբիւրների եւ ուսումնասիրութիւնների հետ: Որոշ դէպքերում օգտուել ենք նաեւ այլ բնակավայրերին առնչուող աղբիւրներից՝ նիւթը համեմատելու եւ փոխլրացնելու նպատակով:

Միեւնոյն նիւթը երեքից աւելի կրկնուելու դէպքում բանասացի չենք յղել՝ այն տրամաբանութեամբ, որ ասուածն ընդհանրական բնոյթ է կրում: Հարցազրոյցները համարակալուել են ըստ տարեթուի, ամիս-ամսաթուի եւ բանասացի՝ օրուայ հերթական համարի[14]:

Ժամանակագրական առումով նիւթն ընդգրկում է Ի. դարասկզբից մինչեւ մեր օրերի պատկերը՝ հիմք ընդունելով այն, որ 85ամեայ բանասացը հաղորդում է տատի հետ կապուած յիշողութիւններ[15]: Թեմայի վերաբերեալ նիւթեր են հաղորդել հարցմանը մասնակցած բանասացներից 35ը, որոնց տարիքը 30ից 86 է: Բանասացներից 6ը տղամարդիկ են, 29ը՝ կանայք:

ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՅԹՆԵՐԸ

Սոյն աշխատանքային խմբի գրառած նիւթերի ու Սիւնիքին առնչուող տպագիր սկզբնաղբիւրների եւ ուսումնասիրութիւնների համադիր վերլուծութեան հիման վրայ ընկուզենին սրբազան ծառ լինելու երկու հիմնական ուղղութիւն ենք առանձնացրել.- 1) Ընկուզենու կապը սրբավայրի հետ, 2) Ընկուզենու հետ կապուած հաւատալիքներ:

---

[13] Սթ. Մկրտչեան, «Սիւնիքի մարզի Գորիսի տարածաշրջանի ազգագրական ուսումնասիրութեան արդիւնքները ամփոփող հաշուետուութիւն», անտիպ, 2017, Երեւան, 282 էջ: Շնորհակալութիւն ենք յայտնում Մկրտչեանին՝ գործակցութեան համար:

[14] Օրինակ՝ հարցազրոյց թիւ (հ/թ) 210807-3aում 21ը տարեթիւն է, 08ը՝ ամիսը, 07ը՝ օրը, 3ը՝ տուեալ օրուայ երրորդ հարցազրոյցը, իսկ aն հարցազրոյցի մասնակից բանասացի անձնական նիշը: Եթէ a, b կամ այլ փոքրատառեր չկան, նշանակում է, որ հարցազրոյցին մէկ բանասաց է մասնակցել: Որոշ հարցազրոյցների հ/թներում առկայ են բանահաւաքի անուան սկզբնատառերը՝ օրինակ՝ ՀԱ՝ Յասմիկ Աբրահամեան, ԱՏ՝ Անի Սարատիկեան (դրանց բացակայութիւնը նշանակում է, որ նիւթը հաւաքուել է ամբողջ թիմի մասնակցութեամբ կամ Ռ. Յովսէփեանի կողմից):

[15] Դաշտային ազգագրական նիւթեր (ԴԱՆ). 2021, Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, բանասաց՝ կին (ասուհետեւ՝ կին կամ տղամարդ), 85 տարեկան:

1) ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ԿԱՊԸ ՍՐԲԱՎԱՅՐԻ ՀԵՏ

Ընկուզենի հանդիպում է ե՛ւ կանոնական[16], ե՛ւ ոչ-կանոնական[17] սրբավայրերում: Սիւնիքում կանոնական սրբավայրերում կամ դրանցից ոչ հե-

[16] Կանոնական սրբավայրերից սրբազան համարուող 700ամեայ ընկուզենի կար Հաղարծինի վանքի (ԺԲ.-ԺԳ. դդ.) տարածքում: Ասում են, որ եթէ մարդը ծառաբնի խոռոչով անցնէր, ապա երազանքը կը կատարուի (A. Asatryan, *Remarkable Trees of Armenia*, S. N., Yerevan, 2012, էջ 41-42. նաեւ՝ Հ. Խաչատրեան, *Uoսեաց*

ռու ընկուզենիներ գտնուելու մասին տուեալներ մեզ առայժմ հանդիպել են Լիճք գիւղում՝ եկեղեցու մօտ[18], Տաթեւում՝ յայտնի Ընկուզուտ կոչուող այգիները[19], Բարձրաւան գիւղի Ս. Մինաս եկեղեցուց վերեւ՝ Ընկուզուտ վայրում[20], Հարանց անապատում՝ աղբիւրի մօտ[21], բայց վերջիններիս սրբազան ծառ լինելու մասին վկայութիւններ դեռեւս չենք գրառել կամ գտել:

Մեր օրերում գործող ոչ-կանոնական սրբավայրերից ընկուզենիներ կան Խնձորեսկում, Տեղ գիւղի մօտ, Գորիսում, Վերիշէնում, Ակներում:

Ըստ խնձորեսկցի բանասացի՝ հնուց ասում են, որ բոլոր խաչերի[22] կողքին ընկուզենի է տնկած, ապա յաւելում, որ եթէ օրինակ, կեռասենի

անտառ, «Արեւիկ» հրատ., Երեւան, 1988, էջ 171): Վայոց Ձորի Շատին գիւղում գտնուող Թագ ինգյոզ սրբավայրում միանաւ բազիլիկ եկեղեցի կայ, որի մէջ միեւնոյն արմատից չորս բնով աճած ընկուզենին սուրբ է համարւում: Ըստ աւանդութեան՝ այդտեղ ամփոփուած են Վարդան Մամիկոնեանի զինուորները (Լ. Սիմոնեան «Եկեղեցի» եւ «ուխտավայր» մշակութային երեւոյթների յարաբերակցութիւնը հայ ժողովրդական քրիստոնէութեան մէջ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2(656):2019, էջ 254-55: Ընկուզենու լուսանկարը տե՛ս՝ Տ. Ալեքսանեան, «Վարդանանց սրբավայրերը Վայոց Ձորի տարածքում», *Հայագիտութեան հարցեր հանդէս,* 1(19):2020, էջ 83): Որոշ վանքեր, պաշտօնական անուանումից զատ, ունեն նաեւ ընկոյզի հիմքով անուանում, օրինակ՝ Ընկուզագոմի վանք, Ընկուզեաց վանք, Ընկուզուտ (Թադեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-բախշեան, Յովհաննէս Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 2*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1988, էջ 378-79), սակայն տեղեկութիւն չենք գտել նշուած սրբավայրերում ընկուզնի լինելու վերաբերեալ:

[17] Կանոնական ենք անուանում այն սրբավայրերը, որոնք սրբագործուած են ըստ Հայ առաքելական եկեղեցու եկեղեցաշինական աւանդոյթների, իսկ ոչ-կանոնական՝ այն սրբավայրերը, որոնք որոշակի տիպաբանութիւն չունեն, այլ ժողովրդի կողմից ընկալւում են որպէս սրբավայր-ուխտատեղիներ: Դրանք կարող են լինել սրբազան համարուող ծառ, քար, աղբիւր, քարայր եւն. (Յասմիկ Աբրահամեան, «Վարդավառեան ուխտավայրերի տիպաբանութեան փորձ», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտի տարեգիրք, Գիտական յօդուածների ժողովածու*, ԺԱ:2016, էջ 177-206):

[18] ԴԱՆ. 2022, Սիւնիք, գ. Լիճք, հ/թ 210623-2, 3a, կին, 65 տ.:

[19] Ս. Վարդանեան, *Հինաւուրց Տանձատափ*, «Էդիթ պրինտ» հրատ., Երեւան, 2015, էջ 22:

[20] Է. Ձոհրաբեան, Հ. Միրզոյեան, *Գորիսի հանրագիտարան*, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երեւան, 2008, էջ 163:

[21] Խանզադեան, *Հայրենապատում, գիրք Բ*, էջ 514:

[22] Մի շարք շրջաններում *խաչն* օգտագործւում է նաեւ եկեղեցի, մատուռ, աղօթատեղի, սրբավայր նշանակութեամբ (*Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. 2*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2002, էջ 285): Սիւնիքում շատ տարածուած է ոչ-կանոնական սրբավայրին խաչ անուանել: Այս երեւոյթի առնչութեամբ ուշագրաւ է հետեւեալ կանոնը. «*Ուխտի տեղ զինչ ու լինի՝ թէ եկեղեցի եւ*

կամ ուրիշ ծառ տնկած չէ, այլ՝ հենց ընկուզենի, ապա «*...պոպոքի ծառին մը նշշնակութիւն օնի*»[23]:

Տեղ գիւղից դէպի Կոռնիձոր տանող ճանապարհին՝ մի ընկուզենու ստուերում, նոյնպէս խաչ կայ: Այն կոչւում է Միլիի (բանասաց՝ Մայիլեանների տոհմից) ծառի տակի խաչ, որտեղ մոմ են վառում: Հաւանական է, որ այդ տոհմի ներկայացուցիչներից մէկն է ծառը տնկել: Թէեւ սրբատեղին տոհմի անունն է կրում, սակայն այն ծառայում է բոլորին[24]: Այդ խաչին են գնում տարբեր նպատակներով՝ իւրաքանչիւրն իր սրտի ցանկութեամբ:

Որոշ սրբավայրերի հիմնադրման պատմութիւններ յուշում են, որ ընկուզենու եւ աղբիւրի՝ կողք-կողքի գտնուելը սրբավայր լինելու նշան է: Օրինակ՝ Գորիսի Հին Կյորէս թաղամասում մի ընկուզենու մօտով անցնող խողովակը վնասուել է, եւ ջուրը սկսել է արտահոսել: Բնակիչները խողովակ են տեղադրել եւ մի անշուք աղբիւր պատրաստել, իսկ կողքին մետաղեայ խաչ են տեղադրել: Ըստ հիմնադիրների՝ այն սրբատեղի չէր, բայց քանի որ ընկուզենի կար, որի կողքով անցնող խողովակի վնասուելու պատճառով սկսել է ջուր հոսել, որոշել են աղբիւր կառուցել եւ խաչ տեղադրել[25]: Տուեալ դէպքում սկզբում եղել է ընկուզենի, որի մօտ պատահականօրէն առաջացած աղբիւրը յուշել է, որ այդ վայրը սուրբ է, ուստի պէտք է ամբողջացնել՝ տեղադրելով նաեւ խաչքար:

Խնձորեսկի նշանաւոր Ինը Մանուկի աղբիւրի դէպքում ընկուզենու արմատներից բխող ջուրը բաւական է լինում՝ այդ համալիրը սուրբ համարելու, այն սրբացնելու եւ հրաշագործ յատկութիւն վերագրելու համար: Ինը Մանուկ սրբավայրի հիմնադրումը (1800ականներ), ըստ ժողովրդական պատումների, կապուած է մի այրի կնոջ՝ Սոնայի հետ, ով Խնձորեսկի կանանց եւ աղջիկների հետ միանում է տղամարդկանց, կռիւ տալիս թշնամու դէմ եւ նահատակւում՝ որբ թողնելով իր ինը զաւակներին: Սոնայի հայրը՝ ուստա Օհանը, ի յիշատակ դստեր, գիւղի նշանաւոր թաղերից մէկում՝ Պիծիծէկում, հսկայ ընկուզենու արմատներից ցայտող ջրի[26] շուրջ զարդա-

---

թէ խաչ» (Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք,* հաւաքական տեքստը, ռուսերէն թարգմ., առաջաբան եւ ծանօթ.՝ Ա. Գ. Գալստեան, Հայպետհրատ, Երեւան, 1958, էջ 79, կանոն ՀԴ (74)):

[23] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, կին, 85 տ.:

[24] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Տեղ, հ/թ 220516-5HA, կին, ծն. 1969:

[25] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, ք. Գորիս, հ/թ 221026-2, տղամարդ, ≈ 50 տ.: Վայոց Ձորի Խաչիկ գիւղում էլ 2003ին գրանցել ենք պատմութիւն, երբ գիւղի աղբիւրներից մէկի մօտ գիւղացիներից մէկն ընկուզենի է տնկել, եւ աղբիւրը տնկողի անունով են սկսել կոչել Մեսրոպի աղբիւր (Յ. Աբրահամեան, ԴԱՆ, 2003, Վայոց Ձորի մարզ, գ. Կեչուտ, հ/թ 2): Այս պատմութեան տարբերակը տե՛ս՝ Խաչատրեան, էջ 174:

[26] Ս. Խանզադեանի «Սպիտակ գառը» պատմուածքում եւս յիշատակւում է ընկուզենի, որի արմատներից ջուր է բխում (Ս. Խանզադեան, «Սպիտակ գառը»,

նախշ կամարով ու կնոջ կուրծք յիշեցնող թասով մի աղբիւր է կառուցում: Օհանը խնդրում է, որ աղբիւրի ջուրը Սոնայի կրծքի կաթը դառնայ եւ պահպանի նրա որբացած զաւակներին[27]:

Խնձորեսկի Կլազի Նովի՝ աղբիւրի կողքին մի կիսափուլ, հեթանոսական աղօթատեղի յիշեցնող մատուռ կայ, որին շատ մօտ մի վիթխարի դարաւոր ընկուզենի կայ[28]:

Վերիշէնում 1979ին հողաբարելաւման աշխատանքների ընթացքում խաչքար է յայտնաբերուել, որի կողքին որոշ ժամանակ անց ընկուզենի է աճել: Դրանից յետոյ տարածքը վերածուել է սրբավայրի: Գիւղացիներից մէկը որոշել է այնտեղ «Մադարների աղբիւր» (մադար՝ մինուճար զաւակ)[29] կառուցել: Սակայն սկսած աշխատանքները չեն աւարտուել, իսկ 500 մետր հեռուից անցկացուած ջուրը, որը նախատեսուած էր միացնել աղբիւրին, ինչ-ինչ պատճառներով այդպէս էլ չի հոսել: Չնայած դրան, քարն ընկալւում է որպէս սրբատեղի.

> Էդ սուրբը ժողովրդի համար մնացել է սուրբ, սրբատեղի, ու ամէն Կիրակի գնում ենք, մոմ վառում: Շաբաթ օր չենք գնում, միայն Կիրակի, գնում են առաւօտը շուտ մոմ վառում: Եթէ կոֆէյի պրիպաս (նշանակում է ի՞նչ - Յ.Ա.) չունես, կարաս կիլոյով շոկոլադ բերես, կոֆէդ խմես գեղեցիկ: Որովհետեւ հանգանակութիւն կայ կոնֆէտի, ով գալիս է, կոնֆէտ է թողնում: Անասնապահը, եթէ անցնում է, սոված է լինում, մտնում է, իր համար կոնֆէտ է վերցնում ու գնում: Ես, օրինակ, իմ ձեռքով գրանիտի վրայ թաքալ եմ խաչը, տարել-դրել եմ, որ բանակից մի կերպ պրծել եկել եմ, տարել եմ դրել էնտեղ, մինչեւ հիմա մնում է, ոչ մէկը չի կոտրում, դրա համար եմ ասում, որ դա իմ սրբատեղին է: Բայց թէ Երիշէնը սաղ էլ էնտեղ են գնում[30]:

Ակներ գիւղի բնակիչներից մէկը՝ Կուքերը, իմանալով, որ գիւղից ոչ հեռու մի խաչ՝ սրբավայր կայ, այնտեղ ընկուզենի է տնկել[31]: Յետոյ էլ սկսել են սուրբ համարուող ընկուզենուց տոպրակներ կապել. «*Մեզ խաչին կողքին պոպոքի ծառ օնենք, որ մոմը ցելեֆանում փիրած քիմ ենք, ասում են*՝

Երկերի ժողովածու, հտր. 6, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1983, էջ 77). նաեւ՝ Խաչատրեան, էջ 169-70:

[27] Ա. Ծատուրեան, *Ներքին Խնձորեսկ,* «Գրիգոր Տաթեւացի» հրատ., Երեւան, 2012, էջ 188: Պատումի տարբերակները տե՛ս՝ Մկրտչեան, էջ 247:

[28] Շ. Սաֆեան, *Հի՛ն Խնձորեսկ, ի՛մ Խնձորեսկ,* «Զանգակ-97» հրատ., Երեւան, 1998, էջ 41:

[29] Մկրտչեան, էջ 207, 260: Գրառուել է Վերիշէնում, բանասաց՝ տղամարդ, ծն. 1973ին: Մադարների աղբիւրների մասին մանրամասներ տե՛ս՝ նոյն տեղում:

[30] Մկրտչեան. էջ 207, 260: Գրառուել է Վերիշէնում, բանասաց՝ տղամարդ, ծն. 1973ին:

[31] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAc, տղամարդ, ծն. 1976ին, 220517-6HAa, կին, ծն. 1944ին:

էդ ծառից կապեցէք, սուրբ ծառ ա: ... Էդ ցելեֆանը ծառին յերան կապում ենք»[32]: *«Տենց սուրբ տեղա ա, մենք Խաչ ենք ասում: Էդ ծառը ընդեղ ա»*[33]:

Հին Կյորէսի դէպքում տեսնում ենք ընկուզենի, յետոյ՝ աղբիւր, ապա՝ խաչքար, Խնձորեսկի Ինը Մանուկի դէպքում՝ ընկուզենի+ջուր, ապա՝ հրաշագործ աղբիւր, Կլազի Նովի (աղբիւրի - Յ.Ա.) դէպքում՝ աղբիւր+մատուռ, ապա՝ ընկուզենի, Վերիշէնի դէպքում՝ խաչքար, ապա՝ ընկուզենի, յետոյ՝ աղբիւր, Ակների դէպքում՝ խաչ/սրբավայր, ապա՝ ընկուզենի փոխկապակցման յաջորդականութիւն: Այսպիսով՝ ընկուզենին եւ աղբիւրը հիմնականում սերտաճած են, իսկ ընկուզենու առկայութիւնը յուշում է տարածքի սրբազան լինելու մասին կամ դառնում է սրբազան տարածքի մի մասը:

Այլ բնակավայրերում գտնուող ոչ-կանոնական սրբավայրերում եւս սրբազան համարուող ընկուզենիներ են եղել[34]:

Հայոց մէջ տարածուած բուսապաշտական հաւատալիքներից էր այն, որ ծառերին զոհաբերութիւններ անելով՝ հնարաւոր է ձերբազատուել տարատեսակ աղէտներից (երաշտ, կարկուտ, հեղեղ, մորեխ եւն.)[35]: Ընկուզենու տարածքը սուրբ ընկալուելու մի դրսեւորում է ընկուզենու ստուերում մատաղ անելը: Նախորդ՝ Ի. դարում կենսունակ է եղել երկակի՝ անձրեւաբեր եւ անձրեւախափան գործառոյթ ունեցող կաթնաւով մատաղի (կաթով եւ բրնձով կամ հաճարի ձաւարով կերակուր) ծէսը, որը Գորիսի շրջանում յայտնի է նաեւ մեր օրերում, սակայն խիստ մասնակի կենցաղավարմամբ[36]: Քարաշէնում կաթնաւ մատաղն արել են գիւղի ճանապարհի խաչմերուկում գտնուող ընկուզենու ստուերում[37]:

---

[32] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAd, կին, ծն. 1980ին:

[33] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAc, տղամարդ, ծն. 1976ին:

[34] Ակոռիում Ընկզարաթ կամ Հազարանփրկիչ կոչուող մի վէմ է եղել, որի ուխտի օրը եղել է Համբարձման տօնը (Ղեւոնդ Ալիշան, *Սիսական,* «Հայագիտակ» հրատ., Երեւան, 2009, էջ 172): Յայտնի ուխտավայր է եղել Քղիի վանքերից մէկում գտնուող Խաղահօր գերեզմանը, որտեղ բռշնիներ եւ ընկուզենիներ են եղել (Արսէն, «Խաղահօր գերեզմանը», *Բիւրակն,* թիւ 6, 22 Յունուար, 1898, Կ. Պոլիս, էջ 88-89): Խանագահ գիւղի մօտակայ ձորակներից մէկում բազմադարեայ համարուող մի ընկուզենի է եղել, որի բնի վրայ կանայք միշտ մոմեր են վառել (Հ. Յովսէփեան, *Ղարադաղի հայերը, I, Ազգագրութիւն,* աշխ.՝ Սուրէն Հոբոսեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2009, էջ 430): Ս. Տերսկան որդու սրբավայրը նշանաւոր է եղել նաեւ իր ընկուզենիներով (Սիմոնեան, *Ծառ,* էջ 263):

[35] Սարգսեան, էջ 78:

[36] Ռ. Յովսէփեան, Հ. Աբրահամեան, «Կաթնաւով մատաղ». անձրեւաբեր եւ անձրեւախափան ծէս Սիւնիքում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների,* 3(666):2022, էջ 262:

[37] Նոյն:

Կաթնատվ մատաղից՝ անարիւն զոհաբերութիւնից բացի, սրբազան համարուող ընկուզենու ստուերում նաեւ կենդանական մատաղ է արուել: Գորիսեցիները մատաղ են արել Կանաչ Եկեղեցու ընկուզենիների տակ[38]:

Այս սրբավայրեր այցելում են տարբեր նպատակներով, մոմ են վառում, ընկուզենուց որեւէ իր են կապում, ինչ-որ բան են թողնում, ընկուզենու ստուերում մատաղ են անում եւն.: Սրբավայրում ընկուզենի լինելը եւ ընկուզենուն սրբազան ուժ վերագրելը լաւագոյնս արտացոլուած է «... *պոպոքը Աստծու գրուած ծառն ա*»[39] ձեւակերպման մէջ: Ուշագրաւ է, որ Եակոբ Գրիմմը, ուսումնասիրելով տեւտոներէն տաճար բառը, յանգել է այն մտքին, որ գերմանների հնագոյն սրբավայրերը եղել են բնական անտառներ[40]: Գուցէ այս ենթախորքում կարելի է դիտարկել այն, որ ընկուզենին սերտաճած է սրբավայրի հետ, եւ յաճախ հենց ծառի, տուեալ դէպքում՝ ընկուզենու գոյութեամբ է բացատրւում տուեալ վայրը սրբազան դիտարկելու եւ սրբազան գործառոյթ վերագրուող այլ առարկաներով (աղբիւր, խաչքար) համալրելու անհրաժեշտութիւնը[41]:

ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐ

Ընկուզենուն առնչուող հաւատալիքները տարբեր են եւ կապւում են ինչպէս ծառի, այնպէս էլ պտղի հետ: Ստորեւ ներկայացնում ենք Սիւնիքի մի շարք բնակավայրերում յայտնի մի խումբ հաւատալիքներ:

Ա) Ընկուզենի չի կարելի կտրել եւ տնկել:

---

[38] Ա. Բակունց, *Կյորէս,* «Անտարէս» հրատ., Երեւան, 2022, էջ 13: Այս սրբավայրը յայտնի է նաեւ Կանաչ խաչ անունով: Զատկին յաջորդող Կանաչ կիրակի գորիսեցիներն այնտեղ ուխտի են գնացել (Լ. Սիմոնեան, *Տոմարային ծիսաշար, հտր. 3*, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երեւան, 2023, էջ 336-37): Այս ուխտագնացութեան աւանդոյթը, սակայն, չի պահպանուել: Սրբավայրը քաջ յայտնի է նաեւ Գորիսի անմիջական հարեւանութեամբ՝ դէպի հիւսիս-արեւմուտք գտնուող Վերիշէն գիւղի բնակիչներին: Ներկայում, անվտանգութիւնից ելնելով, այնտեղ այցելելը չի խրախուսւում (խորին շնորհակալութիւն՝ պատմական գիտութիւնների թեկնածու Լիլիթ Սիմոնեանին՝ սոյն տեղեկութիւնները մեզ հաղորդելու համար):

[39] ԴԱՆ. 2021 Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, կին, 85 տ.:

[40] Ջ. Ֆրեզէր, *Ոսկէ ճիւղը,* «Հայաստան» հրատ., Երեւան, 10989, էջ 135:

[41] Տարբեր բնակավայրերից գրառուած բանահիւսական սկզբնաղբիւրներում ընկուզենու եւ ընկոյզի սրբազան լինելը դրսեւորւում է նաեւ համեմատութիւններում, երբ այն համեմատւում է տարբեր իրերի, այդ թւում՝ «սրբազան գործառոյթ ունեցող» թոնրի, հացի, տան, գաթայի, Աւետարանի, ինչպէս նաեւ երէցկնոջ հետ (տե՛ս օրինակ՝ Գրիգորեան-Սպանդարեան. էջ 400. նաեւ՝ Ս. Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 146), ինչպէս նաեւ օրհնանքներում եւ անէծքներում (տե՛ս օրինակ՝ Վ. Սվազլեան, *Կիլիկիա. արեւմտահայոց բանաւոր աւանդութիւնը,* ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1994, էջ 235. նաեւ՝ Ս. Մանուչարեան *Կապանի գրածաշրջանի խօսուածքները*, «Արմաւ» հրատ., Երեւան, 2020, էջ 222): Սիւնիքում նմանօրինակ նիւթեր մեզ չեն հանդիպել:

Ինչպէս հայոց, այնպէս էլ այլ ժողովուրդների մօտ սուրբ համարուող ծառերն անձեռնմխելի են եղել: Հայոց մէջ այս երեւոյթները հանդիպում են ընդհուպ մինչեւ Ի. դարի գրատոր աղբիւրներում, նաեւ մեր օրերում արձանագրուող դաշտային ազգագրական նիւթերում: Բազմաթիւ պատմութիւններ են պահպանուել, ըստ որոնց՝ սուրբ ծառը կտրողը կամ դրանից թէկուզ մի ճիւղ կամ տերեւ պոկողը պատժուել է՝ հիւանդացել, նոյնիսկ մահացել, իսկ նրա սերունդը՝ ոչնչացել: Արգելուել է նաեւ թափուած չոր ճիւղեր հաւաքելը եւ որպէս վառելափայտ օգտագործելը[42]: Ծառ կտրելու դէպքում ոչ միայն կտրողը կամ նրա սերունդն է պատժուել, այլ նաեւ կարող էին առաջանալ տարերային բնոյթի աղէտներ՝ ամպրոպ, կարկուտ, ջրհեղեղ եւն.[43]: Հնում հայոց մէջ սուրբ ծառեր կամ դրանցից ճիւղեր կտրելն ուղեկցուել է որոշակի ծէսերով ու աղօթքներով, որոնք ժողովրդի յիշողութեան մէջ չեն պահպանուել[44]:

Սնահաւատական բնոյթի արգելքներից զատ, միջնադարում ծառ հատողը պատասխանատուութեան է ենթարկուել նաեւ օրէնքով, ինչն ամրագրուել է օրէնսդրական ժողովածուներում՝ Մխիթար Գօշի *Դատաստանագիրք*ի (կազմուած 1184ին) ՁԵ (75)[45], եւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագիրք*ի (կազմուած 1265ին[46]) 189րդ կանոններով[47]: Ըստ աւանդութեան՝ Ծննդոց անտառից նոյնիսկ մէկ ծառ կտրողը Երուանդ արքայի հրամանով նետուել է յանցանաց խուց եւ մէկ տարի զրկուել հաց ստանալու իրաւունքից, քանի որ ծառը բնութեան համար նոյնն է, ինչ մարդու համար հացը[48]: Ուշագաւ է այն, որ հայոց մէջ, եթէ ծառն է մարդու մահուան պատճառ դարձել, ապա արգելուել է այն հատել[49], սակայն այլ ժողովուրդների մօտ նման դէպքերում ծառին են «պատժել»՝ այն կտրելով[50]:

Ընկուզենի տնկելու եւ կտրելու արգելքի հետ կապուած հաւատալիքները կենսունակ են նաեւ մեր օրերում թէ՛ որպէս յիշողութիւն եւ թէ՛ որպէս գործող հաւատալիք: Մեր դաշտային աշխատանքների ընթացքում այդպիսիք գրանցել ենք Սիւնիքի մարզում՝ Գորիսում, Ակներում, Խնձորես-

---

[42] Սարգսեան, էջ 76:

[43] Նոյն, էջ 77:

[44] Նոյն, էջ 76:

[45] Մխիթար Գօշ, *Գիրք դատաստանի,* աշխատ.՝ Խ. Թորոսեան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրատ., Երեւան, 1975, էջ 66-67, 335:

[46] Սմբատ Սպարապետ, էջ XXVI:

[47] Նոյն, էջ 161:

[48] Սարգսեան, էջ 76:

[49] Մխիթար Գօշ, էջ 128, 391-392, կանոն ՄԺԹ (219):

[50] Հարաւային Ասիայում եւ Հարաւային Ամերիկայում, եթէ մարդը ծառից ընկնելով մահացել է, ապա ծառը կտրել են, իսկ, օրինակ, յունական դատարանը դատի է ե-թարկել մարդու մահուան մէջ մեղաւոր քարը կամ փայտի կտորը, եւ դրանք հրապարակայնօրէն նետուել են երկրի սահմաններից դուրս (Սարգսեան, էջ 75):

կում, Քարահունջում, Տեղում, Քարաշէնում, Խնածախում, Շաքիում, Ոյծում, Անգեղակոթում, Դաւիթ Բէկում, Ծաւում, Շիկահողում, Անտառաշատում, Առաջածորում, Շուանիձորում, նաեւ՝ ՀՀ այլ մարզերի բնակատեղիներում:

ՀՀ բազմաթիւ բնակավայրերում, այդ թւում՝ Սիւնիքում, ընկուզենուն առնչուող հաւատալիքներից ամենատարածուածն այն է, որ ընկուզենի չի կարելի կտրել կամ տնկել: Ընդ որում, թէ՛ կտրելու եւ թէ՛ տնկելու արգելքի պատճառները տարբեր են, որոնք խմբաւորել ենք հետեւեալ կերպ.-

Ընկուզենի կտրելու հետ կապուած հաւատալիքներ

ա) Ընկուզենի առհասարակ չի կարելի կտրել.

Համատարած բնոյթ է կրում այն հաւատալիքը, թէ՝ չի կարելի ընկուզենի կտրել, քանի որ կտրողին դժբախտութիւն, անյաջողութիւն, մահ է սպառնում: Օրինակ՝ *«Գորիսում, ես ասեմ ձեզ, ցանկացած մարդու, որ հարցնէք, Գորիսում պոպոքի ծառ կտրող չկայ, որտեղ ինքը դժբախտութիւն ա բերում»*[51]: Ոյծում եւ Դաւիթ Բէկում ընկուզենու մասին ասում են, որ չի կարելի կտրել, որովհետեւ անյաջողութիւն, մահ կը բերի[52]:

Լծէնում մի ընկուզենի կայ, որը տնկել են տան նախկին տէրերը 1922ին: Որոշակի վերակառուցումներից յետոյ ծառը յայտնուել է դարբասից դուրս՝ ճանապարհի վրայ, կորցրել բնի հիմնական մասը եւ թեքուել դէպի դարպասը՝ ճիւղերը փռելով գոմի վրայ: Անգամ գիտակցելով, որ ծառը կարող է վնասել անասնագոմը՝ տան այժմու տէրը ծառը չի կտրում՝ հաւատալով, որ կտրելու դէպքում կարող է անյաջողութիւն լինել[53]:

Սակայն ոչ բոլորն են արժանահաւատութիւն ընծայում այս հաւատալիքին: Օրինակ՝ Քարաշէնում մի բանասաց ասաց, որ ինքը կտրել է. *«... Դէ, ДРУЖБАով* (բենզինով աշխատող սղոցների ժողովրդական հաւաքական անուանում - Յ.Ա.) *գործ եմ անում, կըտրալ եմ: Բայց էլի սաղ եմ: Սոտ պեաներ ա, է՛լի, դէ ասում են, է՛լի»*[54]:

Շիկահողում եւս, ըստ հաւատալիքի, ընկուզենի կտրողը կարող է մահանալ, *«Բայց հիմա դրած կտրում են, տանում»*[55]:

բ) Երիտասարդներին չի թոյլատրւում ընկուզենի կտրել.

Ըստ խնձորեսկցի բանասացի՝ աւագ սերնդի մարդիկ թոյլ չեն տալիս, որ երիտասարդն ընկոյզի ծառ կտրի՝ ասելով, որ իրե՛նք դա կ'անեն: Այդ արգելքը բացատրում են նրանով, որ *«... պոպոքը Աստծու տուած ծառն*

---

[51] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, ք. Գորիս, հ/թ 210805-1, կին, ծն. 1973ին:

[52] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ոյծ, հ/թ 220710-3AS, կին, 57 տ.: Հմմտ. ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Դաւիթ Բէկ, հ/թ՝ 220708-6ASa, տղամարդ, 71 տ.:

[53] Asatryan, էջ 32-33:

[54] ԴԱՆ. 2021, Սիւնիք մարզ, գ. Քարաշեն, հ/թ 210805-2a, տղամարդ, ≈65 տ.:

[55] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շիկահող, հ/թ 220707-4HA, կին, 86 տ.:

ա»[56]: Հարցին՝ թէ ումից էք լսել այդ մասին, բանասացը պատասխանեց՝ *«կեանքի փորձից»*, ապա յաւելեց՝ մօրից, պապից, աւելի շատ՝ տատիկներից[57]:

Քարահունջում այսպէս չմեկնաբանեցին, սակայն այստեղ եւս հաւատալիքը յայտնի է եւ փոխանցւում է երիտասարդներին: Մի կին պատմեց, որ մի անգամ իր որդին պատանի տարիքում ընկուզենի է կտրել: Իմանալով այդ մասին՝ հարեւաններից մէկը նախատել է՝ ասելով, որ ով ընկուզենի է կտրում, մահանում է: Դրանից յետոյ պատանին ամիսներ շարունակ ապրել է իր արարքի հետեւանքի վախով. *«Չի՛ կարելի, Արա՛մ, ծառը չի՛ կարելի պոպոքի կտրել: Որ կտրում են, եանըմ վատ պեան ա, մահանում են»: Է՛, տղաս քանի ամիս պեաների մէջ ա ընկնում, փիս վախենում ա: Դէ՛, էրեխայ էր, է՛լի»*[58]:

Քարաշէնում եւս յայտնի էր այն հաւատալիքը, որ երիտասարդները չպէտք է ընկոյզի ծառ կտրեն. *«Ընկոյզի ծառի հետ կապուած այսպէս հաւատալիք ունենք, որ ջահէլները չեն կտրում էդ ծառը: ... Որ կտրելու կարիք ա լինում, ջահէլների չեն թողնում, իբր անյաջողութիւն, մահ ա: ...Ջահէլը ո՛չ տնկում ա, ո՛չ կտրում:... Մեծահասակները [կտրում են]՝ հիմնականում»*[59]:

Քարաշէնում աւագ սերնդի կին բանասացներից մէկը պահպանողական էր յատկապէս ընկուզենին չկտրելու հարցում. *«Սու՛տ չի տա: ... Էլի տնկելը՝ ոչինչ: Կտրելը չի՛ կարելի, ջահէլը չի՛ կարելի ճղոպերի ծառը կտրա»*[60]:

գ) Եթէ ընկուզենի կտրելու անհրաժեշտութիւն է առաջանում, ապա այն պէտք է կտրի ընտանիքի անդամ չհանդիսացող մարդ:

Որքան էլ ընկուզենի կտրելը համարւում է դժբախտութիւն բերող երեւոյթ, այդուհանդերձ երբեմն անխուսափելի անհրաժեշտութիւն է առաջանում այդ անել, քանի որ այն վնասակար նիւթեր է արտադրում, որոնք բացասաբար են անդրադառնում թէ՛ մարդու ինքնազգացողութեան, թէ՛ ծառի ստուերում մշակուող բոյսերի վրայ, իսկ արմատները վնաս են հասցնում յարակից շինութիւններին: Նման դէպքերում ընտանիքի անդամ չհանդիսացող մարդու են խնդրում այդ գործն անել: Գորիսում ոչնչից չվախեցող մարդը կարող է համարձակուել ընկոյզի ծառ կտրել. *«Օրինակ՝ Գորիսում, ես ասեմ ձեզ, ցանկացած մարդու, որ հարցնէք, Գորիսում պոպոքի ծառ կտրող չկայ, որտեւ ինքը դժբախտութիւն ա բերում: Տուեալ մար-*

---

[56] ԴԱՆ. 2021 Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, կին, 85 տ.:
[57] ԴԱՆ. 2021 Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, կին, 85 տ.:
[58] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարահունջ, հ/թ 210804-5c, կին, ≈60 տ.:
[59] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարաշեն, հ/թ 210805-2c, տղամարդ, ծն. 1991ին:
[60] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարաշեն, հ/թ 210805-2d, կին, ծն. 1959ին:

դը, օրինակ, իմ այգում կայ պոպոքի ծառեր, որ ինձ խանգարում են, մենք չենք կարա մեր տան անդամներից կտրենք, վնասենք էդ ճիւղը, պէտք ա մի օտարը լինի, որ էդ ընտանիքում բան չլնի, է՞լի, դժբախտութիւն չըլնի»: Հարցին՝ որ եթէ օտարը կտրի, նրան դժբախտութիւն չի՞ պատահի, բանասացը պատասխանեց՝ ոչ, քանի որ ուրիշի այգու ծառն է կտրում: Բացի այդ, *«... տըհենց մարդիկ յատուկ են: ... Էն որ ասում ա՝ կիւլի* (գայլի - Յ.Ա.) *ջիգյար կերած, է՞: ... Այսինքն՝ ոչ միայն քաջ, այլեւ ոչ մի բանից չվախենայ, թէկուզ Աստծուց չվախենայ: Տըհենց մարդկանց են կանչում, է՞լի, որ կյա, պեան անի, կտրի, է՞լի»*[61]:

Ակներում մինչեւ հիմա պահպանուած է այն հաւատալիքը, որ տան տէրը չի կարող իր այգու կամ բակի ընկոյզի ծառը կտրել. *«Տանը տէրը չի կարա կտրի: ... Բայց ուրիշին կանչում ա, կյամ ա, կտրում: ... Ասում են լաւ չի, լի՞, չի կարելի»*[62]:

Տեղ գիւղում մի հետաքրքիր օրինակով եւս գրանցուել է այդ հաւատալիքը. *«Կոնկրէտ էլի մի հատ հարեւան ունէինք գերեզմանոցի մօտ: Իրանց էդ ընկոյզի ծառին միշտ էրեխէքը քարով խփում էին, որ գցէին, մեր գերեզմանաքարերին էին կպնում, ասեցի՝ կտրի, ասեց՝ խնդրեմ, սղոցը՝ տեղ, կացինը՝ տեղ, դուք կտրէ՛ք, դուք էլ մահացէք, ես չե՛մ կտրի»*[63]:

Ծաւում էլ ասում են, որ *«Դու քո դրած ընկուզնեու ծառը իրաւունք չունես կտրես»*[64]: Սակայն համագիւղացի ամուսինները պնդում էին, որ կարելի է կտրել, եթէ այն խանգարում է:

Ընկուզենի տնկելու հետ կապուած հաւատալիքներ

ա) Չի կարելի ընկուզենի տնկել (յատկապէս՝ երիտասարդներին), քանի որ տնկողը բերքը չի հասցնի վայելել:

Ինչ վերաբերում է հաւատալիքին, ըստ որի՝ երիտասարդին չի կարելի ընկոյզի ծառ տնկել, ապա հիմքում ընկած է այն մտայնութիւնը, որ ընկոյզի ծառ տնկողը բերքը չի ուտում՝ նկատի ունենալով այն, որ ընկուզենին ուշ է բերք տալիս, եւ մինչ այդ, տնկողը մահանում է: Դեռեւս ԺԹ. դարի վերջերին տարածուած հաւատալիք էր, որ եթէ մէկն ընկուզենի տնկի, եօթ տարուց կը մեռնի[65]: Այս հաւատալիքը մեր օրերում եւս շատ յայտնի է, սակայն սակաւաթիւ մարդիկ են դրան հետեւում, ընդ որում՝ ոչ միայն երի-

---

[61] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, ք. Գորիս, հ/թ 210805-1, կին, ծն. 1973ին:

[62] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6ՀԱa, կին, ծն. 1944ին:

[63] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Տեղ, հ/թ 220516-5ՀԱ, կին, ծն. 1969ին: Ուշագրաւ է այն, որ ինչպէս օտարը պէտք է կտրի, այնպէս էլ օտարը պէտք է տնկի: Արարատեան դաշտի բնակիչներն օտար մարդկանց են հրաւիրել իրենց համար ընկուզենի տնկելու, քանի որ հաւատացել են, որ եթէ տէրը տնկի, ապա կը մահանայ՝ չհասցնելով տեսնել պտուղները (Սիմոնեան, *Ծաղ,* էջ 262-63):

[64] ԴԱՆ. 2022, Սիւնիք մարզ, գ. Ծաւ, հ/թ 220707-3ՀԱd, տղամարդ, շուրջ 60 տ.:

[65] Ե. Լալայեան, «Արցախ. Գանձակի գաւառ», *Երկեր, հտր. 2,* էջ 192:

տասարդ, այլ երբեմն՝ նաեւ աւագ սերնդի ներկայացուցիչները: Անգեղակոթում հետեւեալն ասացին. *«... Ասում ա՝ հիմնականը պոպոքըն էն ձեւի ծառ ա, որ ծառ տնկողը իբր թէ տրա բերքը չի ուտում: ... Ուշ ա հասունանում: Բայց հե՛ն ա, իմ էրեխէքը տնկել են, լաւ էլ հասունացել ա, էկել ա: Դէ հիմա, թէ՞ էդպէս են ասէ, որ չկտրեն, թէ ի՞նչ չանեն, չգիտեմ: ... Մնացած ծառերի մասին՝ չգիտեմ»*[66]:

Նոյն բացատրութիւնը տուեցին նաեւ Ոյծում. *«... ասում են՝ ջահէլը թող չտնկի, որովհետեւ ընկուզենի տնկողն էդ ընկոյզները չի կարողանում ուտել: Իհարկէ, դա պայմանաւորուած ա նրանով, որ ընկուզենու պտուղը մի քիչ ուշ ա լինում: Դէ հիմա տենց շատ տեսակներ կան, որ 3-4 տարեկան ծառ ա, որ շուտ պտուղ ա տալիս, իսկ էն հին ընկուզենիները, որ առաջ աճեցնում էին, դրանք մի տասը տարեկան դառնում էին, նոր պտուղ էին տալիս»*[67]:

Շաքիում եւս ընկուզենի տնկելու արգելիք հետ կապուած հաւատալիքը յայտնի է. *«Ես յիշում եմ, որ ասում են պոպոքի ծառը տնկողը իրա պոպոքի բերքը չի ուտում, էդքան ուշ ա ըլնում: Էդի սուտ պան ա, բայց, է՞լի: ... Էդ նախապաշարմունքի պատճառով մեր պապերը չեն տնգի, մենք ենք տնգի վերջի տարիներին, մեր ծնողներն են տնգի: ... Իբր թէ էնքան ուշ... տնկողը մահանում ա, է՞լի, չի հասցնում էդ բերքից...»*[68]:

Խնածախում նոյնն է. *«Ջահէլներին էն ժամանակ թոյլ չեն տուալ, որ պոպոք տնկի: ... ասալ են կեանքդ կարճ ա լինելու: ... Մըհէնգ (հիմա – Յ.Ա.) տնկում են»*[69]:

Քարաշէնում այս հաւատալիքին վերապահումով են մօտենում. *«... Ասում են՝ ով որ պոպոքի ծառ ա տնկում, բերքը չի ուտում: Ես էլ եմ կերալ: ... Ես հազար յատ (ծառ – Յ.Ա.) պոպոքի ծառ կտրած կը լինեմ, բայց հլա սաղ եմ»*[70]: Նոյն կարծիքն ունէր նաեւ Անգեղակոթի մի բանասաց: Հարցին՝ թէ արդեօ՞ք երիտասարդը չպէտք է ընկոյզի ծառ տնկի, պատասխանեց. *«Չէ: Է՛, տի՛, պոպոքի ծառերը ես եմ տնկել: ... Ջահել ժամանակ, հեն, է՛ն, կտրուած, էն եանինը, ... շա՛տ մեծ էր, ջահել վախտս եմ տնկել, բայց խանգարում էր, կտրանք: Բայց հենա, նորից աճել ա: ...Խանգարում էր, հա, շատ մեծ էր»*[71]:

Հարցին՝ արդեօ՞ք երիտասարդին չի թոյլատրւում ընկոյզի ծառ տնկել, ակներցի բանասացն ասաց, որ տնկել թոյլատրւում է, իսկ կտրել՝ ոչ[72]: Ա-

---

[66] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-5, կին, ծն. 1959ին:
[67] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ոյծ, հ/թ՝ 220710-3AS, կին, 57 տ.:
[68] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-8e, կին, ծն. 1962ին:
[69] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Խնածախ, հ/թ 220517-4HAa, կին, 83 տ.:
[70] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարաշեն, հ/թ 210805-2a, տղամարդ, ≈65 տ.:
[71] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-3a, կին, ծն. 1940ին:
[72] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAa, կին, ծն. 1944ին, 220517-6HAd կին, ծն. 1980ին:

ռաջաձորում էլ նոյնկերպ պատասխանեցին. *«Կտրում են, սուտ պան ա տա: ... Տնկել, տնկում էլ են»*[73]: Դաւիթ Բէկում հաւատալիքը ծանօթ է, բայց սեփական օրինակով «փորձարկուած» *չէ. «Ասում են, բայց դէ, նաղդի, ես տնկած չկամ»*[74]:

Շիկահողցի 86ամեայ կինը մեզ հանդիպած փթոքրաթիւ բանասացներից էր, ով ասաց, որ ընկուզենի տնկողը երկար է ապրում. *«Իսկ ով որ տնկում ա, երկար ա ապրում»*[75]: Ծառ, այդ թւում ընկուզենի տնկելն օրհնութիւն որակեց նաեւ ակներցի մէկ այլ բանասաց. *«Դա տնկողին օրհնում են»*[76]:

բ) Սրբավայրում բոլորը կարող են ընկուզենի տնկել.

Վերեւում Ակների օրինակներով տեսանք՝ իմանալով սրբավայրի մասին՝ դրա կողքին ընկուզենի են տնկել:

գ) Տան բակում չի կարելի ընկուզենի տնկել.

Ընկոյզի ծառը տնամերձ հողամասում չեն տնկում այն հիմնաւորմամբ, որ տանը դժբախտութիւն է բերում: Առհասարակ, այգում ընկուզենի չեն տնկել՝ չար հրեշտակից «չխփուելու» համար[77]: Սալմաստում հաւատում էին, որ ընկուզենին չի կարելի տան մօտ տնկել, որովհետեւ վրան սատանա կայ[78]: Դսեղցիներն ընկուզենին չարագուշակ էին համարում: Ընդունուած չէր այն տան առաջ տնկել, քանի որ հաւատում էին, որ կակալի (ընկոյզի - Յ.Ա.) ծառ տնկողը կը մեռնի[79]: Քարահունջում ասում են, որ ոչ մէկի բակում ընկոյզի ծառ չկայ, եթէ անգամ կայ՝ ապա հեռու է. *«Չի կարելի, է՛լի: Ոչ մէկի բակում չես տեսնա պոպոքի ծառ, հեռու ա: Եթէ կայ էլ, հեռու ա»*[80]: Շուանիձորում եւս ասում են, որ ընկուզենին տան բակում չեն տնկում, քանի որ դժբախտութիւն է բերում[81]:

Սակայն կան նաեւ տնամերձ հողակտորում ընկուզենի տնկողներ, ովքեր ծառ կտրելու արգելքը սնահաւատութիւն են որակում: *«Մեր բոստանում ախպերս էլ ա տնկալ, ես էլ եմ տնկալ: Ես նոր էլ եմ տնկալ էրկու յատ: ... Քանի էրեխա ունես, էնքան ծառ պիտի տնկես: Էրեխէքիս էլ եմ ես դաժէ բաներ սովորացնում, որ տնկեցէք»*՝ պատմեց ակներցի մի տղա-

---

[73] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Առաջաձոր, հ/թ 220709-11HAb, կին, ծն. 1949ին:
[74] ԴԱՆ. 2022, Սիւնիք մարզ, գ. Դաւիթ Բէկ, հ/թ՝ 220708-6 AS, տղամարդ, 71 տ.:
[75] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շիկահող, հ/թ 220707-4HA, կին, 86 տ.:
[76] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAc, տղամարդ, ծն. 1976ին:
[77] Սիմոնեան, *Ծառ,* 263:
[78] Ա. Աթայեան, *Սալմաստ,* Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, Նոր-Ջուղա, 1906, էջ 91-92:
[79] Սիմոնեան, *Ծառ,* 263:
[80] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարահունջ, հ/թ 210804-5c, կին, ≈60 տ.:
[81] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շուանիձոր, հ/թ 220513-7HAa, կին, ծն. 1967ին:

մարդ[82]: Խնածախում եւս ասացին, որ ընկոյզի ծառ տնկում են[83]: Անտառաշատում էլ ասացին, որ եթէ ծառ կայ, բայց չգիտեն, թէ որտեղից է, ապա *«... շատ խիստ չեն հետեւում: Իրենց տան շրջակայքում կան, բայց իրենք չեն տնկել»*[84]:

Ծաւում եւս երիտասարդն ընկուզենի տնկել է[85]:

դ) Ընկուզենին չի կարելի էտել, թափ տալ, բարձրանալ.

Գորիսում ասացին, որ ընկոյզի ծառը չի կարելի նաեւ էտել[86]:

Սրաշէնում ոչ միայն ընկոյզի ծառը չի կարելի կտրել, այլ նաեւ արգելւում է ընկուզենուն բարձրանալ: Բանասացն ասաց, որ դա լսել է իր տատից, ով զգուշացրել էր, որ ընկուզենին չեն կտրում, չեն թողնում, որ ծառը բարձրանան, քանի որ դա դժբախտութիւն է բերում: Բացի այդ, *«... ասում էր մի՛ բարձրացէք, մի՛ թափէք, աւելի լաւ ա, ինչքան ընկնում ա, դա հաւաքէք, է՛լի»*[87]: Շաքիում եւս պատմեցին, որ երիտասարդներին թոյլ չեն տալիս ընկուզենուն բարձրանալ[88]:

Ընկուզենի կտրելու եւ տնկելու առնչութեամբ *սնահաւատական մօտեցումներին,* սակայն, ոչ բոլորն են արժանահաւատութիւն ընծայում եւ հետեւում, ընդ որում՝ անկախ տարիքից:

Այդ *սնահաւատական մօտեցումներից զատ, կան նաեւ բանական հիմնաւորումներ*: Այդպիսիք գրանցել ենք Շաքիում, Տեղում, Շիկահողում, Անտառաշատում: Բանասացներից մէկը, ով բազմաթիւ ծառեր էր տնկել, այդ թւում՝ ընկուզենի, ասաց, որ երիտասարդներին ընկոյզի ծառ կտրելն արգելելը պայմանաւորուած է այն բանով, որ ծառը կարող է կոտրուել եւ երիտասարդին վնասել[89]: Մեր հարցին՝ Շիկահողի արգելոցից[90] կարելի՞ է ծառ կտրել, բանասացը պատասխանեց, որ եթէ ծառերը կոռ են (այսինքն՝ ընկոյզների կեղեւները շատ պինդ են - Յ.Ա.), իսկ ընկոյզները պինդ են եւ առողջ չեն, ապա կարելի է կտրել տալ[91]:

---

[82] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-6HAc, տղամարդ, ծն. 1976ին:
[83] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Խնածախ, հ/թ 220517-4HAa, կին, 83 տ.:
[84] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Անտառաշատ, հ/թ 220709-2HAa, կին, ≈60 տ.:
[85] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շենաթաղ, հ/թ 220711-7HAb, կին, ծն. 1974ին:
[86] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, ք. Գորիս, հ/թ 210805-1, կին, ծն. 1973ին:
[87] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ծաւ, հ/թ 220707-1HAa, կին, ծն. 1984ին: Բանասացն ապրում էր Ծաւում, սակայն պատմում էր Սրաշէնում ապրող տատիկից լսածը:
[88] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:
[89] ԴԱՆ. 2021, Սիւնիք մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:
[90] Տուեալ դէպքում նկատի է առնուած նաեւ Շիկահող գիւղը, քանի որ այն սահմանակից է «Շիկահող» արգելոցին:
[91] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շիկահող, հ/թ 220707-4HA, կին, 86 տ.:

Ընկուզենու բնափայտը շուտ է կոտրում, հենց այդ պատճառով երիտասարդը չի կտրում. *«Ինքը շուտ ա կոտրում ծառը պոպոքի: ... Որ ընկնում են, կարող ա մարդ մեռնի: Պոպոքի ծառից ով ընկաւ՝ մահանում ա: Էդ ձեւի են ասում»*՝ ասացին Շաքիում[92]: Հարցին՝ որ ընկուզենի տնկողը մահանում է, հաւատալիքի հետ կապ ունի՞, թէ՞ ոչ, բանասացը պատասխանեց. *«Չէ, էնքան որ ասել են, է՛լի, էտի մեծական խօսք ա, եսի՞մ: Ես որ հելել եմ* (բարձրացել եմ - Յ.Ա.), *քանի տարի ա, թափ եմ տալիս: ... ասում են՝ իջի՛, կընգնես, մի բան կըլնես»:* Հարցին՝ արդեօ՞ք երիտասարդին այլ ծառ բարձրանալ եւս թոյլ չեն տալիս, պատասխանեցին, որ միայն ընկուզենի բարձրանալն է արգելւում, քանի որ այն շատ բարձր է, անգամ ներքեւում կանգնած մարդիկ չեն երեւում[93]:

Տեղում եւ Անտառաշատում ասում են, որ ընկուզենին չի կարելի կտրել, քանի որ պետականօրէն չի թոյլատրւում. *«Կտրել եմ, որը իրաւունք չունէի: Ես լսել եմ, որ իրաւունք չունես պոպոքի ծառը կտրես: ... Ասում ա՝ Կարմիր գրքում գրուած ա, իրաւունք չկայ, որ էդ ծառը կտրուի»*[94]: Մի բանասաց էլ ասաց, որ օրէնքը թոյլ չի տալիս ընկուզենի կտրել[95]: Սակայն թէ՛ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրէնքում (ընդունուել է 1999 Նոյեմբերին), թէ՛ *Հայաստանի Հանրապետութեան բոյսերի Կարմիր գիրք*ում սովորական ընկուզենին (*Juglans regia*) յիշատակուած չէ[96]: «Օրէնքը» հաւանաբար «Շիկահող» պետական արգելոցի համար սահմանած արգելքն էր: Ծաւում ասացին, որ նոյնիսկ սեփական այգու ընկուզենին կտրելու համար պէտք է բնապահպաններից թոյլտուութիւն ունենալ[97]:

Յաջորդ *բանական* մօտեցումն այն է, որ ընկուզենու արմատները խորն են գնում, եւ տան մօտ գտնուելու դէպքում կարող են շինութեան հիմքն ու պատերը վնասել: Բացի այդ, ընկուզենին արտադրում է այլ բոյսերի եւ ընդհանրապէս կենդանի օրգանիզմների աճը եւ գործունէութիւնը արգելակող նիւթեր, որով ճնշում է իր ստուերում կամ հարեւանութեամբ աճող միւս բոյսերին եւ ազդում իր սաղարթի տակ տեւական ժամանակ անցկացնող մարդկանց ու կենդանիների առողջութեանը:

> Հիմնականը կարաս դրսի մաս անես: Ճաղերից ներս ունենք էն մի բոստանը, բայց ցանկալի ա դրսի մասը: Որ ներսը մեծանում ա շատ, արդէն բոստան չես կարայ անես, է՞լի, փակում ա: Ինքը իոդը շատ ունի, իրա տակը չես կարայ ոչ մի բան ցանես: ... Ինքը իոդ ա, է՞լի, չի թողում բոյսը աճի: Ջրում ես, չէ՞, բայց

---

[92] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:
[93] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:
[94] ԴԱՆ. 2022, Սիւնիք մարզ, գ. Տեղ, հ/թ 220516-5HA, կին, ծն. 1969ին:
[95] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Անտառաշատ, հ/թ 220709-2HAa, կին, ≈60 տ.:
[96] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=44184, մատչում՝ 03.03.2023: Կ. Թամանեան, *Հայաստանի Հանրապետութեան բոյսերի Կարմիր գիրք*, ՀՀ Բնապահպանութեան նախարարութիւն, Երեւան, 2012:
[97] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գիւղ Ծաւ, հ/թ 220707-3HAd, տղամարդ, ≈60 տ.:

լոբի ես անում, լոբին չի ծաղկում տակը իրա, չի աճում: Կանաչում ա, բայց չի աճում»[98]:

Ուստի՝

... տնամերձում ընկուզենի ունեն, բայց հողամասի ծայրին է տնկած[99]: Պոպոքը, ընդհանրապէս, տարածքով ծառ ա, ... Էն, է՛, մի ամբողջ տարածք ա զբաղեցնում: Իրան պէտք է ընդհանրապէս ազատ տեղ տնկել...: Ու իրա տակ իոդըն էնքան շատ ա, ո՛չ մի բան չի աճում: Ուզում ես լոբի տնկի, ... ուզում ես՝ կարտոշկա, ո՛չ մի բան չի լնըմ: ... Վառում ա, հա՛, վառում ա, չի՛ լնըմ: ... Կո՛ղքն էլ, տա՛կն էլ[100]:

Ընկուզենի տնկելու եւ կտրելու նախապաշարմունքները, ըստ ամենայնի, առնչւում են այն մտայնութեանը, որ ընկոյզի ծառը տէր չունի: Բնութեան հետ սերտ առնչութիւն ունեցողները ճիշտ դիտարկել են, որ ընկուզենին աճում է առնետի, ագռաւի, սկիւռի ձմեռուայ պաշարի համար հողի տակ պահուած[101] կամ պատահականօրէն հողում յայտնուած ընկոյզից[102]:

Եթէ ասւում է, որ ընկոյզի ծառը տէր չունի, այսինքն՝ տնկողն անյայտ է, միգուցէ հենց սրանով էլ դրսեւորւում է ընկուզենու սրբազան ծագում ունենալը, ինչն ուշագրաւ ձեւով արյատայտւում է խնձորեսկցի մի բանասացի հետեւեալ ձեւակերպման մէջ. *«... պոպոքը Աստծու տրուած ծառն ա»*[103]: Ուստի՝ կտրողը կը մահանայ, նրա հետ դժբախտութիւն կը պատահի, քանի որ հատում է «սրբազան ուժի կողմից արարուածը»: Տնկողն էլ պտուղը չի վայելի, քանի որ այն տնկելու «իրաւասութիւնը» սրբազան ուժինն է: *«Ինքնուրոյն էլ ա դուրս գալիս, մէկ էլ տեսնում ես մի ճիւղ դուրս ա եկած իրան կողքից, ոնց որ մայրը երեխայ ունենայ, ա՛յ էդ ձեւի»*՝ ասացին Առաջաձորում[104]: Դաւիթ Բէկում ասում են, որ «*Պոպոքի ծառը չի կարելի տնկել, ոչ էլ կարելի ա կտրել, առաջ չէին տնկում, ինքն իրան աճում էր: ... ինքն իրան դուրս ա գալի, պոպոքը որ թափում ա, դուրս ա գալիս»*[105]: Տնկելու եւ կտրելու արգելքը, այսպիսով, ցոյց է տալիս անձեռնմխելիութիւն, ինչն էլ «սրբազան լինելու» ցուցիչ է:

---

98 ԴԱՆ. 2021, Սիւնիք մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:

99 ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ծաւ, հ/թ 220707-1HAa, կին, ծն. 1984ին:

100 ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-5, կին, ծն. 1959ին, հմմտ. ԴԱՆ. 2022, Սիւնիք մարզ, գ. Տեղ, հ/թ 220516-5HA, կին, ծն. 1969ին, ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ախլաթեան, հ/թ 220712-3HAa, կին, ծն. 1981ին:

101 Կ. Գաբիկեան, *Հայ բուսաշխարհ*, Սրբոց Յակոբեանց տպարան, Երուսաղէմ, 1968, էջ 61. նաեւ՝ Սիմոնեան, *Ծառ,* էջ 262:

102 Ա. Բակունց, *Եղբայրութեան ընկուզենիները, պատմուածքներ*, «Էդիթ Պրինտ», Երեւան, 2018, էջ 217-26:

103 ԴԱՆ. 2021 Սիւնիքի մարզ, գ. Խնձորեսկ, հ/թ 210805-4a, կին, 85 տ.:

104 ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Առաջաձոր, հ/թ 220709-11HAb, կին, ծն. 1949ին:

105 ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ գ. Դաւիթ Բէկ, հ/թ՝ 220708-6AS, տղամարդ, 71 տ.:

Վերոգրեալի ամփոփումը թոյլ է տալիս ասել, որ ընկուզենի տնկելը եւ կտրելն ունեն ինչպէս սնահաւատական, այնպէս էլ բանական բացատրութիւններ: Ընկուզենին չի կարելի *տնկել, կտրել, էտել, բարձրանալ, թափ տալ,* քանի որ դա կարող է անյաջողութիւն, դժբախտութիւն, մահ բերել: Բացառութիւնն այն է, երբ ծառը կտրում է ընտանիքի անդամ չհանդիսացող անձը: Ինչ վերաբերում է տնկելուն, ապա այն արգելւում է երիտասարդներին, քանի որ հնուց եկած հաւատալիք կայ, թէ՝ ընկուզենին ուշ է բերք տալիս, եւ մինչ այդ, *տնկողը մահացած կը լինի եւ չի հասցնի բերքը վայելել:* Տուեալ դէպքում խօսքը տնամերձ հողակտորներում կամ բնակելի վայրի հասարակական նշանակութեան տարածքներում ընկուզենի տնկելու կամ կտրելու մասին է, իսկ սրբավայրում ընկուզենի տնկելն ընդունելի երեւոյթ է: Ընկուզենի կտրելու հետ կապուած բանական բացատրութիւն է համարւում այն, որ ծառը կարող է ընկնել կտրողի վրայ եւ վնասել:

Տնկելու եւ կտրելու հաւատալիքները կենսունակ են թէ՛ որպէս յիշողութիւն, թէ՛ որպէս գործող հաւատալիք: Այդուհանդերձ, ընկուզենին կտրելու հաւատալիքը, տնկելու հաւատալիքի համեմատ, առաւել կենսունակ է, իսկ տնամերձ հատուածներում տնկելու արգելքն աստիճանաբար վերանում է՝ պայմանաւորուած ծառ տնկելը որպէս դրական երեւոյթ դիտարկելու տրամաբանութեամբ:

Բ) Ընկուզենուն վախեցնում են, որպէսզի բերք տայ

ՀՀ տարբեր շրջաններում ծառերի բերքատուութիւնը խթանելու նպատակով յատկապէս Ամանորի գիշերը, Ծաղկազարդին, Աւագ Չորեքշաբթի, մօտեցել են պտուղ չտուող ծառին եւ «վախեցրել»՝ «սպառնալով» կտրել[106]: Այս սովորոյթը եղել է նաեւ Կովկասի տարբեր էթնիկ հանրոյթների, եւրոպական շատ ժողովուրդների մօտ, Ճապոնում եւ այլուր[107]:

Հետաքրքրական է, որ հաւատալիքը կենսունակ է նաեւ մեր օրերում: Անգեղակոթցի մի բանասաց պատմեց.

> Պոպոքի ծառեր կան, որ հասունանում են, դառնում են մեծ ծառեր, բայց ոչ մի հատիկ բերք չեն բերում: Հիմա, ըստ տակու (հնուց եկած - Յ.Ա.) ժողովրդական աւանդոյթի, սովորութեան, ասում են՝ կացինը վերցրու, ասա. «Հեսա կը կտրե՛մ, կ'իմանաս»: Մի երեք անգամ ա, ասում ա, հա՛, որ խփում ես, ասում ես՝ հեսա՛ կը կտրեմ, կ'իմանաս, ... տրանից ծառը սթափւում ա, յաջորդ տարի բերք ա ունենում»[108]: Այդ գործողութիւնը կարող է կատարել ընտանիքի ցանկացած անդամ. «*Օրինակ՝ ես ջղայնանամ, ասեմ ախր էս ծառը ինչի՞ պիտանի ա, ոչ մի բանի պիտանի չի, մէ՛ կացինը տուր, էթամ, սրան վախացնեմ: Վեր-*

---

[106] Լալայեան, «Արցախ. Գանձակի գաւառ», էջ 420-21: Հմմտ.՝ Լալաեան, *Արցախ. Վարանդա,* էջ 193. նաեւ՝ Սարգսեան, էջ 77. նաեւ՝ Յովսէփեան, էջ 458:

[107] Սարգսեան, էջ 78:

[108] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-5, կին, ծն. 1959ին, հմմտ.՝ Խաչատրեան. 1988, էջ 222-23:

ցնեմ, գնամ ասեմ՝ հեսա չոքիցդ կը կտրեմ, ինչի՞ էրկու հատիկ բերք չես ունենըմ: ... Հա՛: Ու էս ծառը, հէ՛ն ա, էն մեր ներքեւն ա, էս տարի միքանի պոպոք ա բերել»[109]:

Ըստ բանասացի՝ կարեւոր չէ՝ ընկուզենուն «վախեցնողը» կին է, թէ տղամարդ: Բանասացն այս հաւատալիքը երկրորդեց հարեւանի օրինակով: Նա պատմեց, որ մի անգամ հարեւանը որոշել է բերք չտուող ընկուզենին գալիք աշնանը հատել, սակայն ինքը, յիշելով տարածուած հաւատալիքը՝ *«էս տարի փորձի համար մի՛ կտրի, թող մնա, ... մեծամեծերն ասել են, որ պոպոքի ծառը, երբեմն, որ վախցնում ես, ասում ա, ինքը սթափւում ա»*, թոյլ չի տուել, որ հարեւանը կտրի, եւ յաջորդ տարի ընկուզենին «բերք ա վերցրել»[110]:

Այսպիսով՝ երբեմնի տարածուած այս հաւատալիքը, որպէս կենսունակ, գրանցել ենք միայն Անգեղակոթում:

Գ) Ընկոյզի մուրաբան պէտք է եօթ տարի անընդմէջ եփել:

Տեղում, Ակներում, Դաւիթ Բէկում, Ծաւում, Շէնաթաղում գրառել ենք հաւատալիք, ըստ որի, եթէ մէկն ընկոյզի մուրաբա է եփում, ապա պէտք է եօթ տարի անընդմէջ եփի, այլապէս տուեալ ընտանիքում դժբախտութիւն կը պատահի. *«... եթէ ընկոյզի մուրաբան մի տարի էփում ես, եօթ տարի իրար հետեւից պիտի էփես»*[111]:

Անտառաշատում եւ Ծաւում, սակայն, կան նաեւ այդ հարցում վերապահում ունեցողներ: *«Ա՜, սու՛տ բան ա, սու՛տ բան ա տա: ... Ի՜, ով օգում ա, էփում ա, ով օգում չի, չի էփում»*[112]: *«Անցած տարի էփել եմ, էս տարի չեմ էփել ու անընդհատ դա մտածում էի: Բայց ասենք թէ տարի ա լինում, ընկոյզ չի լինում: Հը՛: Որտեղի՞ց էփես: Չի՛ լինում, բացարձակ չի՛ լինում: Որտեղի՞ց էփես»*[113]:

Այս հաւատալիքը որեւէ գրաւոր աղբիւրում չենք գտել: Հիմք ընդունելով այս մասին մեզ հաղորդած բանասացների տարիքը՝ կարող ենք ասել, որ Ի. դարի կէսերին այն յայտնի է եղել:

---

[109] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-5, կին, ծն. 1959ին:

[110] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Անգեղակոթ, հ/թ 210808-5, կին, ծն. 1959ին:

[111] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Տեղ, հ/թ 220516-5HA, կին, ծն. 1969ին: Հմմտ.՝ ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ակներ, հ/թ 220517-7HAa, կին, ծն. 1961ին, ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Դաւիթ Բէկ, հ/թ 220708-4HA, կին, ծն. 1956ին, ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Դաւիթ Բէկ, հ/թ 220708-6AS, տղամարդիկ՝ 71 տ., ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ծաւ, հ/թ 220707-3HAa, կին, 71 տ., 220707-3HAc, կին, ≈ 65 տ., ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շէնաթաղ, հ/թ 220711-7HAa, կին. ծն. 1963ին:

[112] ԴԱՆ. Սիւնիքի մարզ, գ. Անտառաշատ, հ/թ 220709-2HAa, կին, ≈60 տ.:

[113] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Ծաւ, հ/թ 220707-1HAa, կին, ծն. 1984ին:

Դ) ընկուզենու ստուերում պառկողի գլուխը ցաւում է, նիհարում է, հիւանդանում եւն.:

ՀՀ տարբեր պատմազգագրական մարզերում ընկուզենու ստուերում նստե-լը վտանգաւոր, նոյնիսկ հիւանդաբեր ու մահաբեր է համարուել[114]: Հնում Արարատեան Դաշտի բնակիչները հաւատացել են, որ ընկուզենու տակ սիրում են ապրել սատանաները, հետեւաբար՝ վտանգաւոր է քնել այդ ծառերի տակ, յատկապէս՝ քամոտ օրերին[115]: Քաջքերը սիրում են լինել նաեւ ծառերի վրայ կամ ծառերի տակ, յատկապէս ընկուզենիների վրայ, եւ վնասում են նրան, ով դրանց տակ է քնում[116]: Երբեմն բնական աղէտների առաջացրած բացասական հետեւանքները վերագրուել կամ շաղկապուել են հաւատալիքների հետ: Ասուածի օրինակ կարող է լինել Սիւնիքի Դաւիթ Բէկ գիւղում 1960ականների վերջի դէպքը, երբ քոյր եւ եղբայր, նստած լինելով ընկուզենու սաղարթի տակ, կայծակնահար են եղել. եղբայրը մահացել է, իսկ քոյրը մտային խնդիրներ է ձեռք բերել: Բանասացը կատարուածը բացատրեց հետեւեալ կերպ. *«Իրա մօտ էդ բանի փայտը ուժեղ մագնիսական ա, որ կայծը գրուել ա, մագնիսը քաշել ու խփել ա իրանց»*[117]*:* Ապա յաւելեց, որ կայծակի եւ առհասարակ անձրեւային օրերին խորհուրդ չի տրւում ընկուզենու ստուերում լինել:

Մեր օրերում այսօրինակ հաւատալիքներ գրանցել ենք Շուանիձորում, որտեղ ասացին, որ եթէ մարդ ընկոյզի ծառի տակ քնի, *կը հիւանդանայ*[118], *գլխացաւ կ'ունենայ*[119]: Քարահունջում էլ յայտնի էր այն հաւատալիքը, թէ եթէ ընկուզենու հովին պառկում են, *նիհարում են*[120]: Շաքիում էլ յայտնի էր, որ ընկուզենու ստուերում *սեղան չեն դնում, չեն նստում*[121], քանի որ *«... ածխաթթու գազ ա արտադրում»*[122]: Եթէ անգամ ընկուզենու ծառի տակ օձը մօտենում է մարդուն, ասում են, որ օձն արդէն խփուած է, այսինքն՝ ընկուզենու ծառի ազդեցութիւնից թուլացել է եւ այլեւս չի կարող մարդուն վնասել[123]:

Հետաքրքիր է, որ նման սնահաւատութիւնները նաեւ բանական յենք են պարունակում, քանի որ ընուզենին արտադրում է այլ կենդանի օրգանիզմների գործունէութիւնը ճնշող նիւթեր:

---

[114] Սարգսեան, էջ 75:
[115] Սիմոնեան, *Ծառ*, էջ 262:
[116] Մ. Աբեղեան, *Երկեր, հտր. 7,* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան,1975, էջ 86:
[117] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Դաւիթ Բէկ, հ/թ 220708-4HA, կին, ծն. 1956ին:
[118] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շուանիձոր, հ/թ 220513-7HAa, կին, ծն. 196ին:
[119] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Քարահունջ, հ/թ 210804-5c, կին, ≈60 տ.:
[120] ԴԱՆ. 2022, Սիւնիքի մարզ, գ. Շուանիձոր, հ/թ 220513-7HAa, կին, ծն. 1967ին:
[121] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-8b, կին, ծն. 1987ին:
[122] ԴԱՆ. 2021 Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-8c, կին, ծն. 1991ին, 210807-8e, կին, ծն. 1962ին:
[123] ԴԱՆ. 2021, Սիւնիքի մարզ, գ. Շաքի, հ/թ 210807-4a, կին, ծն. 1984ին:

Ընկուզենու վնասակարութեան շուրջ հաւատալիքներ տարածուած են եղել կովկասեան, միջինասիական եւ այլ ժողովուրդների մէջ[124]:

Ե) Ընկոյզի ծառը՝ որպէս չարխափան

Թէ՛ անցեալում, թէ՛ մեր օրերում չարխափան յատկութիւն վերագրւում է փոշնի ծառին. առաւել յայտնի է փոշնու բնափայտից թալիսմաններ պատրաստելու երեւոյթը, որոնք «չար աչքից» պաշտպանում են երեխաներին, ընտանի կենդանիներին, վարորդներին եւն.[125]: Ընկուզենու չարխափան յատկութեան մասին մեր ունեցած միակ տուեալը հաղորդել է Քարահունջի բանասացներից մէկը. *«Մեր մօտ էդի պոպոքի ծառն ա: Որ կտրում են, ասում են՝ էդի չարխափան ծառ ա»*[126]:

Զ) Ընկուզենին կապւում է պտղաբերութեան հետ

Ընկոյզի պտղաբերութեան գործառոյթը վաղուց է յայտնի: Այն դրսեւորւում է հիմնականում նորապսակների գլխին ընկոյզ շաղ տալով եւ ընկուզենուց կապուած ճօճանակից ճօճուելով: Ճօճանակի ծէսը բնորոշ է Ս. Սարգսից մինչեւ Վարդավառ ընկած բոլոր տօներին[127]: Այն հայերի, ինչպէս նաեւ շատ ժողովուրդների մօտ կապուել է արգասաւորման, սիրային դրսեւորումների հետ: Տուեալ դէպքում առաջնայինը ճօճանակի երեւոյթն է, այլ ոչ՝ ծառատեսակը, որից այն կապուել է: Սակայն կան տուեալներ, որ ճօճանակը նաեւ ընկուզենուն է կապուել: Գորիսում եւ շրջակայքում եղել են բազմաթիւ խաչեր (օրինակ՝ քար, աղբիւր եւն.), որտեղ տեղացիները յաճախ են ժամանց կազմակերպել: Դուրս գալով Կանաչ Եկեղեցուց՝ ընկուզենիների տակ մատաղ են մորթել, *«իսկ նրանք, ովքեր կյորէսեցի էին, քաշւում էին վեր իրենց զուռնա նաղարայով, հին պարերով, եւ հարս ու աղջիկ ծառերից կախելով պարանները՝ ճօճւում էին խոր անդունդի վրայ»*[128]: Խնձորեսկցի բանաստեղծուհի Շողիկ Սաֆեանը «Մեր աղբիւրնովերը» բանաստեղծութեան մէջ գրում է, որ Կլազի Նովի կողքին մի կիսափուլ մատուռ կայ, որը յիշեցնում է «*Պարզ ու անճառ հեթանոսական աղօթատեղի, //Ջրերի ասփծու մի լքուած փաճար*»: Այդ մատուռին կպած դարաւոր վիթխարահասակ մի ընկուզենի է եղել՝ *«Ճիւղերը կորած երկնի մովերում, արմատը՝ ձորում»:* Այդ ծառն աղջիկների, ջահել հարսների ճինջի (ճօճ)՝ ճլորթի գցելու ծառն է[129]:

---

[124] Սարգսեան, էջ 75:

[125] Ա. Սարգսեան, էջ, 76: Այդ են փաստում նաեւ Սիւնիքում գրառուած նիւթերը:

[126] ԴԱՆ. 2021, Սիւնիք մարզ, գ. Քարահունջ, հ/թ 210804-5b, կին, ծն. 1982ին:

[127] Լ. Սիմոնեան, *Տոմարային ծիսաշար, հտր. 2, Սուրբ Սարգիս, Տըրնդէզ, Բարեկենդան,* ՎՄՎ պրինտ հրատ., Երեւան, 2007, էջ 129:

[128] Բակունց, *Կյորէս,* էջ 13, 14:

[129] Սաֆեան, էջ 41:

Խանագահ գիւղի[130] մօտակայ ձորակներից մէկում մի բազմադարեան ընկուզենի է եղել, որը սուրբ ծառ է համարուել: Ծառի վրայ կանայք մոմեր են վառել, որի հետեւանքով հրդեհ էր բռնկուել, եւ առաջացել խոշոր փչակ: Ծառի հարաւային ճիւղի ստուերում եղել է ճօճուելու համար ընդարձակ ազատ տարածք, եւ Բարեկենդանի օրերին ճինջի խաղի համար պարանը դրանից են կախել[131]:

Զանգեզուրում փեսայի տան շէմին հարս ու փեսայի գլխին ընկոյզ են շաղ տուել[132]: Հաւատացել են, որ այն բեղմնաւորելու եւ բազմանալու ուժ ունի[133]: Ընկուզենու այս «գործառոյթի» մասին վկայող հաւատալիքներ դաշտային աշխատանքների ընթացքում մեր հետազօտական խմբին չեն հանդիպել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով՝ առաջադրուած խնդիրների շուրջ կատարուած ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս արձանագրել հետեւեալը.-

1) կենսունակ հաւատալիքներ

Սիւնիքում ոչ-կանոնական սրբավայրերում ընկուզենի տնկելու կամ ընկուզենու շուրջ սրբավայր «հիմնելու» աւանդոյթը շարունակւում է նաեւ այսօր: Ընդ որում՝ նման սրբավայրերն «ամբողջանում» են ընկուզենու, աղբիւրի/ջրի եւ/կամ խաչի կամ խաչքարի համադրմամբ, ինչը ժողովրդական քրիստոնէութեան ուրոյն դրսեւորում է:

Ինչպէս աւանդական կենցաղում եւ Ի. դարում, այնպէս էլ մեր օրերում, ամենատարածուածն ընկուզենին տնկելու եւ կտրելու հաւատալիքներն են, որոնք սնահաւատական յենքից զատ, ունեն նաեւ բանական հիմնաւորումներ:

Մասնակիօրէն կենցաղավարում է նաեւ այն հաւատալիքը, թէ՝ ընկուզենուն «վախեցնում» են, որպէսզի բերք տայ:

Ընկուզենին տնամերձում չտնկելը, ընկուզենու ստուերում չպառկելը, սեղան չդնելը ոչ միայն հնուց եկած յիշողութիւն է, այլ նաեւ գործող (թէեւ մասնակիօրէն) հաւատալիք:

2) միայն յիշողութիւններում պահպանուած հաւատալիքներ.

Չենք գրանցել որեւէ հաւատալիք, որի մասին յիշողութիւնը պահպանուած լինէր, սակայն, գոնէ մասնակիօրէն, չկենսագործուէր:

---

[130] Գիւղ Երեւանի նահանգի Նախիջեւանի գաւառում (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 2,* Դ-Կ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1988, էջ 640):

[131] Յովսէփեան, էջ 430:

[132] Լալայեան, *Զանգեզուր,* էջ 81:

[133] Ստ. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը,* Հայկական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրատ., Երեւան, 1969, էջ 196. տե՛ս նաեւ՝ ծնթ. 16:

3) մոռացուած հաւատալիքներ (գրաւոր աղբիւրներում պահպանուած). ընկուզենու պտղաբերութեան գործառոյթի մասին դաշտային աշխատանքների ընթացքում տուեալներ չենք արձանագրել, թէեւ գրաւոր աղբիւրներում այդպիսիք հանդիպում են:

4) մեր օրերում ձեւաւորուած/ձեւաւորուող հաւատալիքներներ.

Գրաւոր աղբիւրներում չի հանդիպում, սակայն մերօրեայ կենցաղում հանդիպում է ընկուզենու մուրաբան եօթ տարի անընդմէջ եփելու հաւատա-լիքը, ինչը թոյլ է տալիս կարծել, որ այն աւելի ուշ է ձեւաւորուել:

Մերօրեայ գրանցուած դրսեւորում է նաեւ ընկուզենի ունեցող սրբավայրում շաքարեղէն (մասնաւորաբար՝ շոկոլադ) թողնելը, ընկուզենուց տոպրակ կախելը:

Ընկուզենու չարխափան յատկութիւնը եւս նորոյթ է:

Այս համառօտ ուսումնասիրութիւնը ուրուագծում է նաեւ միքանի դրուագ. 1) ընկուզենի չի կարելի տնկել տնամերձում, բայց կարելի է տնկել սրբավայրում, ընդ որում՝ ոչ-կանոնական: 2) Տան տէրը չի կարող իր բակի ընկուզենին կտրել, բայց այլ անձը կարող է: 3) Ընկուզենին տէր չունի եւ առանց խնամքի է աճում (որով այն մասամբ ընկալւում է որպէս վայրի): Միգուցէ հենց տէր չունենալու եւ սրբազան լինելու հանգամանքով է բացատրւում ընկուզենու անձեռնմխելիութիւնը՝ տնկելու եւ կտրելու արգելքը: Վերը բերուած դրուագների պատասխանները պահանջում են առանձին ուսումնասիրութիւն:

Այսպիսով՝ ընկուզենուն առնչուող մի շարք հաւատալիքներ Սիւնիքում շարունակում են կենցաղավարել կամ փոխանցւում են յիշողութեամբ:

RITUAL FUNCTIONS AND BELIEFS ABOUT THE WALNUT TREE (BASED ON MATERIALS RECORDED IN SYUNIK)

(SUMMARY)

HASMIK ABRAHAMYAN
hasmikabrahamyanihasce@gmail.com

Pantheistic phenomena have always been an important component of spiritual culture due to various uses of natural resources in general and vegetation in particular, including the use of different types of trees. The rituals and beliefs connected to the walnut tree are among the most common in the Syunik region in Armenia.

The paper is based on ethnographic field work conducted between 2021 and 2023 in thirty urban and rural settlements of the Syunik. Collected ethnographic materials and published sources testify that the sanctity of the walnut tree in Syunik has two main expressions: 1) the connection of the tree to canonic and non-canonical shrines around which rituals are performed; 2) the beliefs connected to the tree. The walnut-related beliefs may be grouped as a) viable beliefs, b) beliefs present only in memories, c) forgotten beliefs (recorded in publications), d) beliefs formed in the present days.

This study concludes that the non-material cultural traditions connected to the walnut tree in Syunik continue existing in the form of passive beliefs transmitted by oral lore and in the form of living practices.